ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2001 ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
E-mail: vanadzor.lori@mta.gov.am
info@vanadzor.am

Հեռ. 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

079 / 6443 «03» 07 2018թ.

«ԼԱՅՎ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԳԱՐԵԳԻՆ ԱՆՏՈՆՅԱՆ

Վանաձորի համայնքապետարանի և «ԼԱՅՎ» ՍՊԸ-ի միջև 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված «Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի 1-ին գոտու կենցաղային աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման գնման» N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/03» պայմանագրի համաձայն Ձեր կազմակերպության կողմից պետք է իրականացվեր Վանաձոր քաղաքի աղբահանության աշխատանքները:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնի կողմից պարբերաբար կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընթացիկ տարում վերոհիշյալ աշխատանքները կատարվում են սահմանված ժամկետի էական խախտումներով, ինչն էլ խոչընդոտներ է ստեղծում պայմանագրով նախատեսված գործողությունների պատշաճ կատարման համար:

Հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի 2.1.3 կետի պահանջը Վանաձորի համայնքապետարանը միակողմանի լուծում է 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/03 ծածկագրով պայմանագիրը:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԱՍԼԱՆՅԱՆ